

# ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԼՈՒԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

## «ՆՎԱԶՈՂ ՀԵՏԱԳԻԾԸ»

Մրաժույթ էի, որ կմեռնեմ ծերությունից: Բայց, երբ ամբողջ եվրոպային կերակրող Ռուսաստանը սկսեց ցորեն գնել, հասկացա, որ մեռնելու եմ ծիծաղից:

**Ուլինսոն Զերչիլ<sup>4</sup>**

**Հիմնաբառեր.** լույս, տեղական սորտեր, արտադրություն, սպառում, արտահանում, ասոցիացիա

Դեռևս 20-25 տարի առաջ Հայաստանը հայտնի էր իր համեղ, մսոտ և հյութալի տեղական լույսով: Այնուհետև, տարբեր հանգամանքների բերումով, դրա տեղը գրավեցին ներմուծված հիբրիդները (խառնածին սորտերը): Գյուղացիները նախընտրեցին աճեցնել լույսի այս տեսակները, քանի որ դրանք ավելի փոխադրատունակ են, համեմատաբար երկար են պահպանվում և պարունակում են ավելի շատ չոր նյութեր: Այս հատկանիշները կարևոր են վերամշակողների և արտահանողների համար: Բնակչությունը, որ սեղանի սորտերի հիմնական սպառողն է, աստիճանաբար զրկվեց տեղական լույս վայելելու հաճույքից: Այս բացը որոշ չափով լրացնում են «Բանջարաբուսության ային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը և տեղական լույս մշակող սահմանափակ թվով գյուղացիական տնտեսություններ: Գիտական կենտրոնը պահպանում է տեղական սորտերի գենոֆոնդը և ստեղծում նոր սելեկցիոն սորտեր, բայց դրանց արտադրությունը չափազանց սահմանափակ է:

Հողվածում առաջարկվում է ստեղծել «Հայկական լույս արտադրողների և սպառողների ասոցիացիա»: Բացի ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ից, այս ընկերակցությանը կամավոր հիմունքներով կարող են անդամակցել հայկական լույս արտադրողները և այդ արտադրանքին նախապատվություն տրվող սպառողները: ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ը, առաջնորդվելով մասշտաբի էֆեկտով, տեղական լույսի մշակությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց շուկայականից ցածր գներով կարող է տրամադրել սերմեր, սածիլներ, խորհրդատվական և մարքեթինգային ծառայություններ:



### Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԾ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնտեսի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնտեսի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է: Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

<sup>4</sup> <https://anna-plisetski.livejournal.com/72731.html>

Վերջին տարիներին սպառողները հաճախակի դժգոհում են, որ մեր տեղական լոլիկի սորտերն անհետացել են շուկայից: Ինչո՞ւ է դժվարացել վաճառասեղաններին հայկական լոլիկի «Անահիտ», «Հոբելյանական», «Մասիսի 202», «Նվեր», «Լիա», «Արա», «Նոյ», «Գանձա» և այլ սորտերի բերք գտնելը: Հիմնական պատճառը մեկն է. հողագործը չափազանց սահմանափակ չափով է զբաղվում դրանց մշակությամբ: Ըստ փորձագիտական դիտարկումների ու «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ 48 անվանումով տեղական սորտի լոլիկի ընդհանուր ցանքատարածությունը 180-190 հա է: Սա այն դեպքում, երբ Հայաստանում վերջին հինգ տարվա միջին տվյալներով լոլիկի ցանքատարածությունը 6432 հա է, համախառն բերքը՝ 252,2 հազ. տոննա, իսկ մեկ հեկտարի բերքատվությունը՝ 39,2 տոննա<sup>2</sup>: Ի դեպ, տեղական սորտերի բերքատվությունն այդ ցուցանիշից բավական բարձր

է: Օրինակ՝ «Անահիտ 20» և «Անահիտ 351» սորտերի բերքատվությունը համապատասխանաբար՝ 56 և 69, իսկ առավել տարածված՝ «Լիա», «Նոյ», «Նվեր», և «Հայաստանի հրաշք» սորտերինը՝ 85-97 տ/հա է: Ավելին, 2009 թ. շրջանացված «Արա 557» սորտի հնարավոր բերքատվությունը 105, իսկ փաստացին՝ 96 տ/հա է<sup>3</sup> (աղյուսակ 1):

Դարձյալ հարց է ծագում. ինչո՞ւ է սահմանափակվել նման բարձր բերքատվությամբ և համային հատկանիշներով սորտերի մշակությունը: Մեր կարծիքով, այս հարցին պատասխանելու համար պետք է ուսումնասիրել լոլիկի իրացման կառուցվածքը: Դիցուք՝ 2016-2018 թթ. միջին տվյալներով Հայաստանից տարեկան արտահանվել է մոտ 38 հազ. և վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել՝ մոտ 23 հազ. տոննա լոլիկ (աղյուսակ 2):

Բերված տվյալները վկայում են, որ լոլիկի մշակության տարածքը 2014 թ. համեմատությամբ 2018-ին պակասել է ավելի քան 2000 հա-ով, իսկ համախառն բերքը՝

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Լոլիկի հայկական սորտերի հիմնական ցուցանիշները 2014-2018 թթ. միջին տվյալներով\***

N	Սորտի կամ տեսակի անվանումը	Շրջանացման տարին	Հնարավոր բերքատվությունը, ց/հա	Ցանքարտա-ծությունը, հա **	Փաստացի բերքատվությունը (2015-2019 թթ. միջինը), ց/հա	Ծախսերը 1 հա-ի հարվով, հազ. դրամ	Իրացման միջին գինը, կգ/դրամ
1.	Անահիտ 20	1944	600	8,9	560	1750,0	50
2.	Նվեր	1984	850	17,6	750	1780,0	45
3.	Ռաննի Նուշ	1984	750	7,6	670	1750,0	50
4.	Երազ	1990	800	19,9	780	1850,0	85
5.	Լիա	1990	850	9,9	800	1880,0	55
6.	Անահիտ 351	2005	820	15,9	690	1680,0	50
7.	Նոյ	2008	1050	15,3	870	1950,0	55
8.	Նորք	2008	1080	7,5	950	1950,0	55
9.	Հայաստանի Հրաշք	2009	980	9,9	920	1950,0	50
10.	Դարակերտի 15	2015	990	13,6	930	1750,0	55

\*Ընտրվել են այն սորտերը, որոնց մշակության տարածքը 7 հա-ից ավելի է:

<sup>2</sup> Հաշվարկված է ըստ ՀՀ ԱՎԾ և ԱՎԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» հրապարակման 2014-2018 թթ. տվյալների:  
<sup>3</sup> Տվյալները տրամադրել է «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, կ. գ. դ. Գայանե Սարգսյանը:



**Լոլիկի արտադրության և օգտագործման հիմնական ցուցանիշները ՀՀ-ում<sup>4</sup> 2014-2018 թթ.**

Ցուցանիշները	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Տարածությունը, հա	6513	7401	7649	6240	4361
Համախառն բերքը, հազ. տ	290,2	317,0	298,1	234,2	133,6
Բերքատվությունը, տ/հա	44,6	42,9	38,1	36,9	31,0
Ներմուծում, հազ. տ	2,7	2,4	1,6	1,9	9,8
Արտահանում, հազ. տ	2,5	4,1	41,7	30,1	40,9
Օգտագործվել է սննդի համար այդ թվում՝ վերամշակում	197,0	194,7	194,3	165,6	146,8
Տարեկան սպառումը մեկ շնչի հաշվով	68,0	69,4	69,6	59,5	52,8

կրճատվել մոտ 2,2 անգամ: Մի կողմից՝ դա սպասելի էր, քանի որ 2012-2017 թթ. գյուղատնտեսական մշակաբույսերի տարածության ու բերքատվության ցուցանիշներն այն աստիճանի էին ուռճացվել, որ թեկուզ ոչ լրիվ չափով իրականությանը մոտ վիճակագրությունը պետք է անկում արձանագրեր: Մյուս կողմից՝ վերջին տարիներին տարածում ստացած լոլիկի ցեցը, որի դեմ դեռևս չեն կիրառվում արդյունավետ պայքարի միջոցներ, հարկադրում է սահմանափակել մշակվող տարածքները:

Եթե նկատի ունենանք, որ ուսումնասիրվող տարիներին համախառն բերքը միջին հաշվով կազմել է 222 հազ. տոննա, ապա վերջինիս մոտ մեկ երրորդն իրացվել է արտահանման և մթերման խողովակներով: Նշենք, որ դրան զուգընթաց, ավելանում են լոլիկի ներկրման ծավալները: Վերջին հանգամանքն իսկապես տարօրինակ է, քանի որ Հայաստանը մշտապես հանդես է եկել որպես լոլիկ արտահանող երկիր և չօգտագործված մեծ ներուժ ունի արտադրության ու արտահանման ծավալներն ավելացնելու առումով: Սակայն, միանգամայն պարզ է, որ վերամշակման և արտահանման նպատակով օգտագործվում են փոխադրման ու պահպանման հարմար առավել պինդ, շատ չոր նյութեր պարունակող սորտերը: Ինչպես ասում են, երկու երանի մեկտեղ չի լինում.

տեղական սորտի լոլիկը համեղ ու հյութեղ է, սակայն չոր նյութերի պարունակությամբ, պահպանման ու փոխադրման տեսանկյունից՝ զիջում է արտերկրից բերվածներին: Մինչդեռ, ՌԴ արտահանվող լոլիկը, որպես կանոն, բեռնատար ավտոմեքենաներով անցնում է 3-4 օրվա ճանապարհ, և փափուկ լինելու դեպքում կորուստները կմեծանան: Ինչ վերաբերում է բերքի վերամշակմանը, ապա դա հիմնականում օգտագործվում է 12-ից մինչև 24% չոր նյութեր պարունակող խտացված տոմատի զանգվածի՝ տոմատի պյուրեի և 24%-ից ավելի չոր նյութեր պարունակող տոմատի մածուկի արտադրության համար<sup>5</sup>: Միանգամայն տրամաբանական է, որ այդ արտադրանքների ելքային ցուցանիշները մեծանում են՝ կախված լոլիկի պտուղների չոր նյութերի պարունակությունից, որը, ինչպես նշվեց, արտերկրից ներմուծված հիբրիդային սորտերի մեջ ավելի բարձր է: Ահա՛ հիմնականում այս առավելությունների շնորհիվ՝ ավելացավ հիբրիդային սորտերի շուկայական պահանջարկը, և տեղական լոլիկն աստիճանաբար դուրս մղվեց արտադրությունից:

Ի պատիվ հայ բանջարաբույծ գիտնականների, պետք է նշել, որ նրանք պահպանում են ավանդական սորտերի գենֆոնդը և ընտրասերման արդյունավետ գործունեությամբ ստեղծում նոր՝ որակա-

<sup>4</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ ՀՀ ԱՎԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը», «Պարենային ապահովություն և աղքատություն», «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» 2014-2018 թթ. հրապարակումների տվյալների:

<sup>5</sup> Աղաջանյան Ժ. Գ., Պահածոյացման տեխնոլոգիա, Եր., ՀՊԱՀ, 2011, էջ 7:

կան բարձր հատկանիշներով սորտեր: Այդ աշխատանքն իրականացնում է Արարատի մարզի Դարակերտ գյուղում գտնվող ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ը: Վերջինս, իր սահմանափակ հնարավորություններով հանդերձ, կազմակերպում է նաև տեղական լոլիկի պտղի, սերմի և սածիլի արտադրություն: Այդուհանդերձ, լիակատար արդյունք ապահովելու նպատակով անհրաժեշտ է բարելավել հայկական լոլիկի շուկայահանման կառավարման համակարգը՝ ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ ստեղծելով «Հայկական լոլիկ արտադրողների և սպառողների ասոցիացիա»: Բացի ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ից, այս կառույցին կամավոր հիմունքներով կարող են անդամակցել այլ արտադրողներ և այդ արտադրանքին նախապատվություն տվող սպառողներ: Առաջնորդվելով մասշտաբից տնտեսման էֆեկտով՝ ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ը տեղական լոլիկի մշակությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց շուկայականից ցածր գներով կարող է տրամադրել սերմեր, սածիլներ, խորհրդատվական և մարքեթինգային ծառայություններ: Ինչ վերաբերում է ընկերակցության անդամ սպառողներին, ապա նրանք պետք է նախապես ներկայացնեն տարվա ընթացքում լոլիկի սպառման պատվեր և կատարեն

որոշակի կանխավճար՝ գնումներն իրականացնելով արտոնյալ պայմաններով: Սպառողների հետ կնքված պայմանագրին համապատասխան, ԲՏՄԳԿ ՊՈԱԿ-ի համակարգմամբ, հատուկ ֆիրմային խանութից կամ առաքման միջոցով կիրականացվի նաև օրգանական լոլիկի և այլ բանջարաբոստանային մշակաբույսերի բերքի վաճառք: Կարելի է հաստատագրել, որ ընկերակցության անդամների պատվերը գերակա է, և այն բավարարելուց հետո միայն արտադրանքի մնացած քանակությունը շուկայական գներով պետք է վաճառվի այլ սպառողների:

Արտադրության և իրացման կազմակերպումը, ըստ այս կառուցակարգի, նախադեպի բացակայության պատճառով սկզբնական փուլում, հնարավոր է, բախվի վստահության որոշակի պակասի և դժվարությունների: Սակայն, հրապարակային գործունեության ու արդյունավետ կառավարման շնորհիվ, դրանք արագ կերպով հաղթահարելի են: Գրեթե համանման սկզբունքով աշխարհի շատ երկրներում, հատկապես՝ Նիդեռլանդներում, հաջողությամբ գործում են բազմաթիվ սպառողական կոոպերատիվներ և ըստ նախասիրությունների ձևավորված ընկերություններ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաջանյան Ժ. Գ., Պահածոյացման տեխնոլոգիա, Եր., ՀՊԱՀ, 2011:
2. Ղարիբյան Գ., Բանջարաբուծություն, ՀՀԿԳՆ, Եր., ՀԱԱՀ, 2014, 164 էջ:
3. ՀՀ ԱԿԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը», «Պարենային ապահովություն և աղքատություն», 2014-2018 թթ. հրապարակումներ
4. <https://anna-plisetski.livejournal.com/72731.html>

**Самвел АВЕТИСЯН***Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,  
доктор экономических наук, профессор*

АГРАРНАЯ ПОЛИТИКА

**«УБЫВАЮЩАЯ ТРАЕКТОРИЯ» ПРОИЗВОДСТВА ПОМИДОРА МЕСТНЫХ СОРТОВ**

Еще 20-25 лет назад Армения была известна своими мясистыми, сочными и вкусными местными помидорами. Впоследствии, из-за различных обстоятельств, импортные гибриды заняли их место. Крестьяне предпочитали выращивать эти гибриды, потому что они были более транспортабельными, сохранялись относительно долго и содержали больше сухого вещества. Эти признаки важны для переработчиков и экспортеров. Население, являющееся основным потребителем столовых сортов, постепенно лишается удовольствия наслаждаться местными помидорами. Этот пробел частично заполняют Научный центр овощеводства и некоторые крестьянские хозяйства, которые занимаются выращиванием местных сортов. Научный центр поддерживает генофонд местных сортов и создает новые селекционные сорта, но их производственные возможности сильно ограничены.

В этой статье предлагается создать Ассоциацию производителей и потребителей армянского помидора. Помимо Научного центра, членами этой ассоциации могут стать другие производители и потребители, которые предпочитают этот продукт. Юридическим и физическим лицам, занимающимся выращиванием местных сортов томата, научный центр может предоставлять семена, рассаду, консультационные и маркетинговые услуги по более низким ценам.

**Ключевые слова:** *помидоры, местные сорта, производство, потребление, экспорт, ассоциация*

**Samvel AVETISYAN***Senior Expert at "Amberd" Research Center, ASUE,  
Doctor of Sciences (Economics), Professor*

AGRICULTURAL POLICY

**“DECREASING TRAJECTORY” OF LOCAL TOMATO VARIETIES’ PRODUCTION**

Even 20-25 years ago, Armenia was known for its meaty, juicy and tasty local tomatoes. Subsequently, due to various circumstances, import hybrids took their place. The villagers preferred to grow these hybrids because they were more transportable, kept relatively long and contained drier matter. These attributes are important to processors and exporters. The population, the main consumer of table varieties, is gradually losing the pleasure of enjoying local tomatoes. This gap is partially filled by the Scientific Center for Vegetable Production and some peasant farms that are engaged in the cultivation of local varieties. The scientific center supports the gene pool of local varieties and creates new breeding varieties, but their production capabilities are very limited.

The paper proposes to create an association of producers and consumers of Armenian tomato varieties. In addition to the Science Center, other manufacturers and consumers who prefer this product can become members of this association. The Scientific Center can provide seeds, seedlings, as well as consulting and marketing services at lower market prices for legal entities and individuals engaged in the cultivation of local varieties of tomato.

**Keywords:** *tomatoes, local varieties, production, consumption, export, association*